# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆI» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 56 - 57 (16354) ՇԱԲԱԹ, 8 ՕԳՈՍՏՈՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ` 25 ԹԵԹՐԻ


ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄՏԱԴԻՐ ՉԷ ՄԻԱՆԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ»

*Վրաստանը մտադիր չէ միանալ Ռուսաստանի դեմ Եվրամիության սահմանած պատժամիջոցներին: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:*



«Ես`, որպես կառավարության ղեկավար, կարծել եմ ու կարծում եմ, որ Վրաստանը չպետք է միանա Եվրամիության կողմից Ռուսաստանի նկատմամբ սահմանված պատժամիջոցներին: Մենք նման դիրքորոշում ենք ունեցել անցյալ տարի, այդ դիրքորոշումը մնացել է նաեւ այժմ, մենք չենք պատրաստվում այն փոխել»,- հայտարարեց կառավարության ղեկավարը:

«Ավելի քան մեկ տարի առաջ` (2014 թվականի հունիսի 23-ին) մենք միացանք Ռուսաստանի նկատմամբ Եվրամիության սահմանած 15 պատժամիջոցներից միայն մեկին»,- ճշտեց վարչապետը` նկատի ունենալով Ղրիմում եւ Սեւաստոպոլում թողարկված արտադրանքի ներմուծումը:

Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց, որ «Վրաստանը թանկ է գնահատում այն, որ վերջին տարիներին հաջողվել է վերականգնել ու զարգացնել առեւտրատնտեսա-

(Շարունակությունը` 2-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎԵՏՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՉԷ»



*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վետո է դրել «Ազգային բանկի մասին» օրինանախագծին: Հիշեցնենք, որ օրինանախագիծը նախատեսում էր Ազգային բանկից բանկային վերահսկողության ծառայության անջատումն ու դրա գործարկումը որպես առանձին գործակալության:*

Հիմնավորելով օրինանախագծի վրա վետո դնելու իր որոշումը, նախագահը նշեց, որ սահմանադրական կարեւորագույն ինստիտուտներից մեկի` Ազգային բանկի փոփոխման հիմնավորումները քիչ են: «Ազգային բանկն այն կարեւորագույն ինստիտուտն է, որ գրանցված է Վրաստանի Սահմանադրությունում: Եվ մենք այդ ինստիտուտների փոփոխման մասին խոսում ենք այն ժամանակ, երբ միջազգային փորձագետների տեսանկյունից այն արժանի է բարձր գնահատականի»,- հայտարարեց Մարգվելաշվիլին: Նախագահի խոսքերով, արագացված մեթոդով ընդունված որոշումներն ազդեցություն կգործեն երկրի մակրոտնտեսական կայունության եւ դրամական քաղաքականության արդյունավետության վրա:

(Շարունակությունը` 2-րդ էջում)

## ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԸ ՆԱԽԱԳԱՀՆ Է, ԹԵՊԵՏ ԱՄԵՆԱՈՒԺԵՂԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԱԶԴԵՑԻԿԸ` ՎԱՐՉԱՊԵՏՆ Է»

*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, հեռուստատեսությամբ իր ելույթում, հայտարարեց, որ Վրաստանի առաջին դեմքը նախագահն է, թեպետ հավելեց, որ երկրում ամենաուժեղ եւ քաղաքական առումով ամենաազդեցիկ դեմքը մնում է վարչապետը:*



«Երկրի առաջին դեմքը միշտ չէ, որ համարվում է ամենաուժեղ քաղաքական դեմք: Վրաստանում առկա համակարգի համաձայն, ամենաուժեղ, քաղաքական իշխանության առումով ամենանշանավոր դեմքը վարչապետն է»,- հայտարարեց խորհրդարանի խոսնակը` հավելելով, որ վարչապետը հանդիսանում է խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչը, կառավարության, գործադիր իշխանության ղեկավարը, որն ընդունում է կարեւոր որոշումների 70-80 տոկոսը:

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՄ

## ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարարի աշխատակազմը, Վրաստանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում Եվրամիության հետ անայցեգրային պայմանագրից օգտվելու հարցում երկրի բնակչությանը տեղեկատվության փոխանցման ուղղությամբ:*

Օգոստոսի 3-ից վրացերեն, աբխազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն լեզուներով հեռուստա-ռադիոալիքներով, համացանցով ներկայացվում են համապատասխան տեսահոլովակներ: «Արշավի արդյունավետ իրականացման նպատակով, Վրաստանի կառավարությունը մշակել է գործողությունների ծրագիր, որի նպատակն է անմիջական հաղորդակցության ուղիով երկրի բնակչությանը մանրամասն տեղեկատվություն փոխանցել անայցեգրային

(Շարունակությունը` 3-րդ էջում)

ՀԻՇԱՏԱԿ

## ՅՈԹ ՏԱՐԻ` ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ



*Յոթ տարի է անցել 2008 թվականի օգոստոսյան դրամատիկ օրերից: Այդ ողբերգական տարելիցը նշվում է Վրաստանի բոլոր տարածաշրջաններում:*

Նշենք, որ վրացական կողմը շարունակում է 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի հետաքննությունը: Այն Վրաստանի գլխավոր դատախազությունն իրականացնում է 2008 թվականից: Իշխանափոխությունից հետո, գլխավոր դատախազությունը «Օգոստոսի ռազմական գործողությունների ժամանակ եւ դրան հաջորդող ժամանակահատվածում, ենթադրաբար, կատարած հանցագործությունների ուսումնասիրության համար» հիմնել էր հատուկ վեց հոգուց բաղկացած հետաքննչական խումբ, որի կազմում ընդգրկված էին դատախազության ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչները: Իշխանությունը սույն որոշումը պարզաբանեց Հռոմի կարգավիճակի անդամությամբ ստանձնած միջազգային պարտավորությամբ: Նշենք, որ քրեական միջազգային դատարանը իրավասու է քրեական հետաքննություն իրականացնել այն իրավախախտումների նկատմամբ, որոնք թվարկված են Հռոմի կարգավիճակի հինգերորդ հոդվածում: Դրանք են` ցե-

(Շարունակությունը` 3-րդ էջում)

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

### ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ԵՎ 300 ՎՐԱՍՏԱՆՑԻ ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶՈՒՀԻՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻՑ, ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻՑ, ԱԽԱԼՑԻԽԵԻՑ, ԲԱԹՈՒՄԻԻՑ ԵՎ ՄՑԽԵԹԱՅԻՑ

*Օգոստոսի 2-ին Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտում հանդիսավոր, մեծ եւ յուրօրինակ արարողությամբ մեկնարկեցին Համահայկական 6-րդ ամառային խաղերը:*



Բացման արարողությանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, վարչապետ Հովիկ Աբրահամյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, պաշտոնատար այլ անձինք:

(Շարունակությունը` 7-րդ էջում)

## ԽԱՂԵՐԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

### ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԾՆՈՒՆԴՈՎ ՎՐԱՍՏԱՆՑԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՆ



Օգոստոսի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ի պատիվ Համահայկական 6-րդ խաղերի բացմանը, անցկացրեց ընդունելություն, որին այլոց հետ միասին ներկա էին Թբիլիսիի պատվիրակության ղեկավարները` Համահայկական խաղերի Վրաստանի հասարակական խորհրդի նախագահ Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիի քաղաքապետարանի կրթության, սպորտի, երիտասարդական գործերի ծառայության ղեկավարի առաջին տեղակալ Կախա Ցեցխլաձեն, նույն ծառայության սպորտի վարչության պետ Գեգա Ջուրաբաշվիլին:

Ընդունելությանը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Համահայկական 6-րդ խաղերի նախապատրաստման եւ անցկացման աշխատանքներում ունեցած գործուն մասնակցության համար Հայաստանի նախագահի շնորհակալագրով պարգեւատրեց մի խումբ անձանց, այդ թվում ծնունդով վրաստանցիներ, Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիայի նախագահ, «Ապավեն» ընկերության գլխավոր տնօրեն Գագիկ Աղաջանյանին եւ Մոսկվայում գործող «Վաչիան» կոնցեռնի գլխավոր տնօրեն Լեւոն Մանուկյանին:

*Նկարում.- Աջից` Հայաստանի նախագահը, Համահայկական խաղերի կազմկոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը եւ Գագիկ Աղաջանյանը:*

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄՏԱԴԻՐ ՉԷ ՄԻԱՆԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան հարաբերությունները Ռուսաստանի հետ, ինչը երկու երկրների միջեւ կառուցողական երկխոսության արդյունք է: Մենք ցանկանում ենք այսուհետեւ էլ զարգացնել առեւտրատնտեսական համագործակցությունը Ռուսաստանի հետ»,- հավելեց նա:

Վարչապետի հայտարարությամբ, ներքին ապակայունացնող ուժերը դեմ են Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Վարչապետի խոսքերով, Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների վարականգնման գործընթացն սկսվել է, սակայն կարեւորագույն հիմնախնդիրը շարունակում է մնալ Աբխազիան եւ Սամաչաբլոն: «Ես չեմ կասկածում, որ ներքին ապակայունացնող ուժերը չեն ցանկանում Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորում ու առեւտրական կապերի վերականգնում: Սակայն մենք շահագրգռված ենք Ռուսաստանի հետ վերականգնել բարիդրացիական հարաբերությունները: Գործընթացն սկսվել է, սակայն կարեւորագույն հիմնախնդիրը Աբխազիան եւ Սամաչաբլոն են: Մյուս հարցերում մենք աստիճանաբար առաջ ենք ընթանում»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎԵՏՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՉԷ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նախագահը գտնում է, որ Ազգային բանկի մասին իր վարչակազմում մշակած օրինանախագիծը, հիմնավորված դիտողություններով կուժեղացնի Ազգային բանկի անկախությունն ու վերահսկողության քաղաքականության արդյունավետությունը: Նախագահը հույս հայտնեց, որ պատգամավորները խորապես կուսումնասիրեն հարցը եւ կընդունեն ճիշտ ու հավասարակշռված օրինանախագիծ:

Գիորգի Մարգվելաշվիլին՝ ի պատասխան իր հասցեին հնչող քննադատությանը, հայտարարեց, որ ինքը երդում է տվել ոչ թե «Վրացական երազանքին», այլ՝ պետությանը:

«Երբ ես տեսնեմ, որ որեւէ օրինագիծ հակասում է երկրի հիմնարար շահերին, ես չեմ վախենա, չեմ թաքնվի թփերի մեջ, չեմ ասի՝ «մենք, ախր, մի թիմ ենք», եւ կասեմ ճշմարտությունը: Չնայած դրան կիետեւեն քաղաքական արշավներ՝ ես ուղիղ կասեմ ճշմարտությունը, քանի որ կարծում եմ՝ դա լավ է Վրաստանի համար: Դա կարող է անհարմար լինել իշխող թիմի համար, բայց ես Վրաստանի ժողովրդի կողմից ընտրված նախագահ եմ, որը երդում է տվել ոչ թե «Վրացական երազանքին», այլ Վրաստանի քաղաքացիների առաջ, պետության առաջ՝ որ կծառայեմ ոչ թե քաղաքական կուսակցության, այլ՝ երկրին»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

## ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԸ ՆԱԽԱԳԱՀՆ Է, ԹԵՊԵՏ ԱՄԵՆԱՈՒԺԵՂԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԱԶԴԵՑԻԿԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Անդրադառնալով Ազգային բանկի մասին նախագահի դրած վետոյի թեմային, Ուսուփաշվիլին նշեց, որ հարկ է՝ հանգիստ ընդունել նախագահի կողմից սահմանադրական իրավունքից օգտվելու փաստը: «Երբ նախագահը մեր ընդունած օրենքներն առանց աղմուկի ստորագրում է, մենք դա չենք տոնում: Նույն հանգստությամբ պետք է ընդունենք նաեւ դրված վետոն: Գուցե նախագահին դուր չեն եկել խորհրդարանի հիմնավորումները, այն նպատակահարմար չի գտել, սակայն մենք պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ Վրաստանում վերջակետ է դրվել ճշմարտության մոնոպոլիայի վրա: Սրանից հետո ոչ մեկի մոտ չպետք է ծագի զգացում, որ ինքը միշտ արդար է: Դա սահմանադրական գործընթաց է»,- հայտարարեց խոսնակը եւ հավելեց, որ ժամանակն է «Վրացական երազանքը» հաշտվի այն իրողության հետ, որ նախագահ Մարգվելաշվիլին, թեպետ առաջադրվել է «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից, չի հանդիսանում «Վրացական երազանք» քաղաքական թիմի անդամը:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄՂԵԲՐԻՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ



Վրաստանի վարչապետի հրամանագրով, 45 տարեկան Գիորգի Մղեբրիշվիլին նշանակվել է Վրաստանի ներքին գործերի նախարար:

Գիորգի Մղեբրիշվիլին, նոր պաշտոնում աշխատանքային առաջին օրը լրագրողների հետ զրույցում, հայտարարեց կրիմինալի դեմ անզիջում պայքար սկսելու մասին:

Մղեբրիշվիլին հայտարարեց, որ գերատեսչությունը խստորեն արձագանքելու է նաեւ ՆԳՆ-ի աշխատակիցների գործած հանցանքներին. «Նմանատիպ յուրաքանչյուր փաստ մանրակրկիտ ուսումնասիրվելու է, եւ ընդունվելու են խստագույն որոշումներ»:

Հիշեցնենք ընթերցողին, որ նախկին ՆԳ նախարար Վախթանգ Գոմելաուրին նշանակվել է Վրաստանի պետական անվտանգության գործակալության պետ:

## ԿԱԽԻ ԿԱԽՆԻԱՇՎԻԼԻՆ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ



Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրամանագրով, 42 տարեկան Կախի Կախնիաշվիլին նշանակվել է քրեակատարողական եւ պրոբացիայի հարցերով նախարար:

Նոր կարգավիճակում իր անդրանիկ հայտարարությամբ, Կախի Կախնիաշվիլին նշեց, որ բանտարկության մեջ գտնվող կանանց հաստատության համար հատկացվել է նոր տարածք: Նախարարի խոսքերով, այդ հաստատությունում արգելափակված կանանց կտրվի շաբաթ եւ կիրակի օրերին թողնել բանտը, հանդիպել ընտանիքի ու հարազատների հետ, իսկ երկուշաբթի վերադառնալ արգելավայր: «Կանանց ազատության սահմանափակման հաստատությունների հետ կապված գործընթացը մեկնարկել է: Մինչեւ Նոր տարի մենք կկարողանանք դնել նոր հաստատության հիմքերը:

Այդ գերատեսչության նախկին նախարար Գիորգի Մղեբրիշվիլին նշանակվել է Վրաստանի ներքին գործերի նախարար:

## ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու համանագրով, Վրաստանի ներքին գործերի փոխնախարարներ են նշանակվել Արչիլ Թալակվաձեն, Շալվա Խուցիշվիլին եւ Դավիթ Խուցիշվիլին: Նշենք, որ սույն հրամանագիրը հրապարակվել է երկրի կառավարության պաշտոնական կայքէջում:*

Վարչապետի մեկ այլ հրամանագրով, Վրաստանի պետական անվտանգության գործակալության պետի առաջին տեղակալ է նշանակվել Իոսեբ Գոգաշվիլին, որը մինչ այդ ներքին գործերի առաջին փոխնախարարն էր: Ծառայության ղեկավարի տեղեկալներ են նշանակվել նաեւ Լեւան Իզորիան եւ Միրիան Մճեդլիշվիլին:

Հիշեցնենք, որ հուլիսի 22-ին երկրի խորհրդարանի կողմից Վրաստանի պետական անվտանգության գործակալության պետի պաշտոնում հաստատվել էր 40 տարեկան Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՆՁՆԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ





*Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ֆեյսբուքի իր էջում, հայտնել է, որ հուլիսի վերջերին Վրաստան կատարած այցի շրջանակներում Թբիլիսիում հանդիպել է իր վրացի գործընկերոջ՝ Թամար Սանիկիձեի հետ եւ քննարկել կրթական ոլորտում երկու երկրների միջեւ համագործակցությանն առնչվող հարցեր:*

«Վրաստան կատարած անձնական այցը բավականին արդյունավետ էր:

Բացի Ջավախեթիում ունեցած հանդիպումներից եւ միջոցառումներից, Թբիլիսիում շատ օգտակար ու ոչ ֆորմալ քննարկումներ ունեցա Վրաստանի իմ գործընկերոջ հետ հայ-վրացական համագործակցության մասին եւ մեր հայրենակիցների կրթական հիմնախնդիրների շուրջ:

Հույս ունեմ, որ մոտ ապագայում վիրահայության մի շարք կրթական հարցեր կկարգավորվեն, իսկ մեր երկու երկրների միջեւ կիրականացվեն կրթական նոր նախագծեր»,- ասված է Արմեն Աշոտյանի գրառման մեջ:



### ՄԻԱՅՆԱԿ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿՎԵՐՍԿՍՎԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՑ

*Կենսաթոշակառուները, ում օգնության հանձնումը որոշակի ժամանակ ընդհատված էր, նպաստը կստանան օգոստոսի 20-ից:*

*Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Զազա Սոպրոմաձեն, կենսաթոշակառուները առանց որեւէ արգելքի կկարողանան ստանալ օգնությունը:*

*«Օգոստոսի 20-ից կսկսվի այն օգնության հանձնումը, որը կառավարության կողմից իրականացված փոփոխության արդյունքում, վերականգնվել էր միայնակ կենսաթոշակառուների համար»,- նշեց նա:*

### ՎՐԱՑԱԿԱՆ ՉԻՊՍԸ ԿԱՌԱՔՎԻ ՀԱՅԱՍՏԱՆ

*Գերմանացի գործարար Ժանա Ֆրեդերիկեն 4 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում է կատարել Թբիլիսիում վրացական չիպսերի արտադրություն ստեղծելու համար: Արտադրանքի համար կօգտագործվի բացառապես վրացական կարտոֆիլ:*

*Այս առնչությամբ գործարարն արդեն հողատարածք է գնել Քարելիում: Ժանա Ֆրեդերիկեն արդեն գրանցել է արտադրանքի անվանումը՝ «Քարավան», որը, բացի վրացական շուկայից, նախատեսվում է արտահանել նաեւ Հայաստան ու Ադրբեջան:*

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍԱԿԱԳՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԿԼՈՒԾՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ

*Թբիլիսիում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հարցը վերջնականապես կլուծվի դեկտեմբերի 18-ին: Հուլիսի 31-ին Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման ազգային հանձնաժողովը քննարկման համար ընդունեց մայրաքաղաքում սակագնի բարձրացման հարցով, «ԹԵԼԱՍԻ» ընկերության հայտը:*

### ՀՐԴԵՀ «ԷԼԻԱՎԱ» ՇՈՒԿԱՅՈՒՄ

*Օգոստոսի 4-ին Թբիլիսիի կենտրոնում գտնվող շինարարական նյութերի «Էլիավա» շուկայում բռնկված հրդեհի հետեւանքով երկու մարդ է զոհվել:*

*Կրակի դեմ պայքարելու համար ներգրավվել են 15 հրշեջ բրիգադ եւ ուղղաթիռներ:*

*Զոհվածների ինքնությունն առայժմ պարզված չէ, քանի որ մարմինները խիստ այրված են: Հրդեհի հետեւանքով տուժել է եւս հինգ մարդ, այդ թվում՝ մեկ հրշեջ եւ մեկ փրկարար, տուժածներից երեքը ծանր վիճակում են:*

### ՀԱՑԸ ՍԿՍԵԼ Է ԹԱՆԿԱՆԱԼ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի հացամթերքներ թողարկողների ասոցիացիայի նախագահ Մալխազ Դոլիձեն, հացի թանկացման գործընթացն արդեն սկսվել է: Նրա խոսքերով, թողարկողների մի մասը հացի գինն արդեն բարձրացրել են, իսկ մյուսները՝ նվազեցրել են քաշը:*

*Ինչպես հայտարարեց Մալխազ Դոլիձեն, հացի թանկացման գլխավոր պատճառը ալյուրի գնի ավելացումն է: Նրա խոսքերով, չնայած այս տարի ստացվել է հատիկայինների բարձր բերք, ալյուրի գինը բարձրացավ եւ 37-ի դիմաց ներկայումս մի պարկ ալյուրն արժե 44 լարի:*

*«Որքան տեղեկացված եմ, շուկայում նկատվում է ալյուրի ներկրման խախտումներ: Նշվում է, որ դա արվում է տեղի արտադրողներին օգնելու նպատակով: Սակայն, ըստ իս, դա չպետք է արվի բնակչության հաշվին»,- հայտարարեց Դոլիձեն:*

*Ներկա փուլում նա հրաժարվեց կանխագծումներից, թե որքանով կարող է ավելանալ հացի գինը, թեպետ կրկին հավաստեց, որ թանկացման գործընթացն սկսվել է:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԻՇԱՏԱԿ

## ՅՈԹ ՏԱՐԻ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղասպանությունը, մարդկության առջեւ կատարած հանցագործությունը, պատերազմի հանցագործությունը եւ ագրեսիան: Վրաստանը Հռոմի կարգավիճակին միացել է 2003 թվականին, իսկ Ռուսաստանը հրաժարվեց ստորագրել այդ պայմանագիրը:

Ինչպես նշեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, «Հաագայից անմիջական պահանջ է ներկայացվել, որ մեր պետության կողմից իրականացվի օգոստոսյան պատերազմի հետաքննությունը, հակառակ դեպքում՝ Հաագան ինքը կքննարկի բոլոր մանրամասները»: Իր հերթին, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին նշեց. «Սույն հետաքննությանը շատ ավելի մեծ նշանակություն պետք է շնորհենք եւ շատ ավելի արագ իրականացնենք, որպեսզի երկրի հիմնախնդիրները հենց երկրի ներսում էլ կարգավորվեն: Ոչ ոք չի ցանկանում, որ 2008 թվականի օգոստոսի գործը հետաքննի Հաագայի դատախազությունը»:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՄ

## ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆԱՅՑԱԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հաղորդակցությունից օգտվելու հարցով»,- ասված է պետնախարարության հաղորդագրության մեջ:

Նշենք, որ Վրաստանի եւ Եվրամիության միջեւ այցեգրային պայմանակարգի դյուրացման վերաբերյալ բանակցությունները սկսվեցին 2012 թվականի հունիսից: Մշակված ծրագիրը ընդգրկում է չորս փուլ, որը Վրաստանին փոխանցվեց 2013 թվականի փետրվարին: Եվրահանձնաժողովի 2015 թվականի մայիսի 8-ի զեկույցի համաձայն, Վրաստանը կատարել է Եվրամիության հետ այցեգրային պայմանակարգի ազատականացման գործողության ծրագրի երկրորդ փուլի 15 հիմնական պահանջներից յոթը:

Վրաստանի իշխանությունների ներկայացուցիչները բազմիցս հայտարարել են, որ Եվրամիության հետ անայցեգային հա-



ղորդակցությունը կհաստատվի 2015 թվականի վերջին-2016 թվականի սկզբին:

ՏԵՍԱԿԵՏ

## ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ Է»



*Ինչպես հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով նախարար Պաատա Զաքարեիշվիլին, ազգային տարադրամի արժեզրկումը տարածաշրջանային հիմնախնդիր է:*

Նրա հայտարարությամբ, կառավարող կոալիցիան կատարել է իր նախընտրական խոստումը: «Հարկ է հաշվի առնել աշխարհում ընթացիկ իրադարձությունը, տնտեսական հիմնախնդիրները: Լարիի համարժեքի անկումը տարածաշրջանային հիմնախնդիր է: Այդ ֆոնի վրա գտնում եմ, որ նախընտրական խոստումները կատարվել են, սակայն կյանքն առաջ է ընթանում, ցավոք, ոչինչ չի էժանանում: Մենք փորձում ենք պահպանել նվազագույն սակագինը, որպեսզի երկրում էներգետիկական ճգնաժամ չծագի»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

## ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՐԱԿՈՉ ԿԱՐՈՂ Է ՉԼԻՆԵԼ, ՍԱԿԱՅՆ ԴԱ ՉՊԵՏՔ Է ԱՐԳԵԼՎԻ ՕՐԵՆՔՈՎ



*Ինչպես հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, պարտադիր զորակոչը կարող է չլինել, սակայն դա օրենքով չպետք է արգելվի:*

Ինչպես նշեց պաշտպանության նախարարը, այն իրավիճակում, որում գտնվում է Վրաստանը, պետք է պահվի անհրաժեշտության դեպքում, նման հնարավորություններից օգտվելու հավանականությունը: «Ես դեմ եմ պարբերական զորակոչի, գտնում եմ, որ որքան շատ լինի պայմանագրային կողմնորոշումը բանակում, այնքան ավելի բարձր կլինեն հնարավորությունները, թեպետ կտրականապես ես դեմ եմ նաեւ օրենքով դրա արգելմանը»,- հայտարարեց Խիդաշելին: Նախարարի խոսքերով, վրացական բանակը պատրաստ է անցնելու նոր մեթոդի, քանի որ, ներկա դրությամբ, նրա կազմի 10 տոկոսը նման կարգի զինծառայողներ են: «Եթե դիտենք տոկոսային հարաբերությունը, ապա այսօր զորակոչայինները կազմում են բանակի 7-8 տոկոսը: Դա ինքնին ցույց է տալիս, որ բանակը պատրաստ է անցնել նոր մեթոդի: Օրինակ, կառավարության նիստում հաստատվեց աշնանային զորակոչի ծրագիրը: Զորակոչը սահմանափակվում է հազար զինվորով, թեպետ մինչ այդ զորակոչվում էր 2500-ը, այսինքն՝ մենք ընթանում ենք զորակոչի նվազեցման ուղիով, կատարում ստանձնած պարտավորությունը, որից հետո 2016 թվականին մեզ մոտ զորակոչային զինվորներ չեն լինի»,- հայտարարեց Թինա Խիդաշելին:

ԻՐԱՎՈՒՆՔ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




*Օգոստոսի 5-ին Արդարադատության տանը տեղի ունեցավ ընտանեկան բռնության դեմ մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը:*

Փոփոխությունների նպատակն է Վրաստանի օրենսդրության համապատասխանությունը կնոջ նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի ու կանխման հարցով Ստամբուլի հռչակագրի պահանջներին: Արդարադատության նախարարության կողմից մշակված օրենսդրական փաթեթն առնչվում է շուրջ 20 օրենքների: Ինչպես հայտարարեց Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, նախարարության նպատակն է՝ արդեն սեպտեմբերին վավերացնել Ստամբուլի հռչակագիրը: Նա ներկայացրեց նաեւ օրենսդրական փոփոխությունների հիմնական ուղղությունները: Նախարարի խոսքերով, ներկայացված փոփոխություններն ուղղված են ընտանեկան բռնության դեմ օրենսդրության խստացմանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ՉՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Հուլիսի 30-ի տվյալներով, շուրջ 452,7 հազար ֆիզիկական անձ Վրաստանի ֆինանսների նախարարության, եկամուտների ծառայությունում լրացրել են հռչակագրի հատուկ ձեւաթուղթը: Ներկայացված փաստաթղթի հիման վրա սկսվել է չհարկադրվող նվազագույնի վերադարձման գործընթացը:*

Նշենք, որ այդ գործընթացն սկսվել է ընթացիկ տարվա ապրիլի 1-ից: Վրաստանի քաղաքացիներին, որպես չհարկադրվող նվազագույն, վերադարձվում է մինչեւ 360 լարի, որը հարկի տեսքով առգրավվել էր 2014 թվականին այն անձանցից, ում տարեկան եկամուտը չէր գերազանցում 6 հազար լարին:

Ինչպես տեղեկացրին եկամուտների ծառայությունից, ներկա դրությամբ, չհարկադրված նվազագույնի տեսքով քաղաքացիներին է վերադարձվել 124,3 միլիոն լարի:



### ԹՈՒՐՔԻԱ
### ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԵՆ

*Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) եւ գլխավոր ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության (ԺՀԿ) միջեւ մոտ մեկ ամիս շարունակվող բանակցությունների անարդյունք մնալը հիմք է տալիս ասելու, որ կոալիցիոն կառավարություն ձեւավորելու հարցում կողմերի միջեւ լուրջ տարակարծություններ կան, ինչը քաղաքական օրակարգ է մտցրել այդ երկրում արտահերթ ընտրություններ անցկացնելու հարցը: ԱԶԿ-ին չի հաջողվել կոալիցիոն կառավարություն ստեղծելու շուրջ համաձայնության գալ նաեւ ընտրությունների արդյունքներով խորհրդարանում 80-ական պատգամավորական աթոռներ զբաղեցրած Ազգայնական շարժում (ԱՇԿ) եւ քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (ԺԴԿ) հետ:*

### ԿԱՐՍԻ ՄՈՏԱԿԱՅՔՈՒՄ ՊԱՅԹԵՑՎԵԼ Է ԲԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ԷՐԶՐՈՒՄ ԳԱԶԱՏԱՐԸ

*Բաքու-Թբիլիսի-Կարս-Էրզրում գազատարի՝ թուրքական Սարիղամիշ գավառով անցնող հատվածում անհայտ պատճառներով պայթյուն է որոտացել: Ներկայում գազատարով բնական գազի հոսքը դադարեցված է: Օրերս պայթեցվել էին Քիրքուք-Յումուրթալըք նավթատար խողովակաշարը, որով իրաքյան նավթը հոսում է Թուրքիա, ինչպես նաեւ Թուրքիայի Աղրը (Արարատ) նահանգում Մասիսի ստորոտով Իրանից Թուրքիա գազփոխադրող խողովակաշարը: Երկու պայթյունների պատասխանատու էին հայտարարվել երկրում ահաբեկչական համարվող Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) զինյալները:*

### ԻՐԱՆ
### ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ ՓԱԿՎԵԼ Է

*Ավելի քան երկու շաբաթ Թուրքիայում շարունակվող հարձակումների պատճառով Իրանը երկրի հյուսիս-արեւմուտքում ժամանակավորապես փակել է թուրք-իրանական սահմանը: Թուրքիայի Ուրֆա նահանգի Սուրուչ քաղաքում հուլիսի 20-ին տեղի ունեցած ահաբեկչությունից հետո, երկրում իրավիճակն աստիճանաբար դուրս է գալիս վերահսկողությունից: Երբ թուրքական ռազմական ուժերը, ԻԼԻՊ-ի դիրքերը ռմբակոծելուն զուգահեռ, սկսեցին ռմբակոծել նաեւ քուրդ զինյալների դիրքերը Հյուսիսային Իրաքում եւ երկրի ներսում: Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) մարտիկներն իսկական պատերազմ սկսեցին թուրքական ուժային կառույցների դեմ: Ամեն օր երկրի արեւելյան նահանգներում քրդերը հարձակվում են ոստիկանության եւ զինվորականության վրա՝ իրենց հետեւից զոհեր կամ վիրավորներ թողնելով:*

### ԼԵՀԱՍՏԱՆ
### ԱՆՋԵՅ ԴՈՒԴԱՆ ՍՏԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ



*Օգոստոսի 6-ին, 43 տարեկան Անջեյ Դուդան ստանձնել է Լեհաստանի նախագահի պաշտոնը՝ դառնալով երկրի ժամանակակից պատմության մեջ պետության վեցերորդ ղեկավարը: Երդմնատվության հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Սեյմի (խորհրդարանի ստորին պալատի) լիագումար նիստերի դահլիճում: Դուդան հաղթանակ է տարել հերթական նախագահական ընտրություններում, որոնք Լեհաստանում կայացել են ընթացիկ տարվա մայիսին: Քվեարկության երկրորդ փուլում նա ստացավ ընտրողների 51,55 տոկոսը: Երկրորդ ժամկետի համար առաջադրված Կոմորովսկին հավաքել է ձայների 48,45 տոկոսը:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ Է ԲՈՒՀ ԱՎԱՐՏԱԾՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*Համաշխարհային բանկի պատվերով, նախորդող երկու տարիներին ուսումնասիրություն է անցկացվել ցածր եկամուտ ունեցող պետություններում, ինչի արդյունքում պարզվել էր, որ մասնավորապես Վրաստանում եւ Հայաստանում աշխատանքային շուկաները տառապում են աշխատուժի հմտությունների պակասից: Ինչպես հայտնում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կայքը, ուսումնասիրվել են խնդիրներ, թե ինչպես են մարդիկ գտնում աշխատանք, արդյոք վստահ են իրենց համապատասխան կարողությունների վրա եւ, թե որքանով է կրթությունը նախապատրաստում աշխատանքի:*




Համաշխարհային բանկը` թե' Վրաստանում, թե' Հայաստանում շատ կարեւոր խնդիր է համարում գործազրկության բարձր մակարդակը բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում: Երկու երկրներում էլ բակալավրի աստիճան ունեցող հարցվածների կեսը չի աշխատում: Հատկանշական է այն, որ` թե' Վրաստանում, թե' Հայաստանում բարձրագույն կրթություն ունեցողները կարծում են, որ չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, մյուս կողմից` գործատուներն են բողոքում, որ աշխատուժը չունի համապատասխան ունակություններ:

Երկու երկրներում էլ աշխատող մարդկանց մեծամասնությունը նշել է, որ աշխատանք գտել է իր սոցիալական կապերի` ընկերների, բարեկամների եւ այլոց միջոցով: Նման պատասխան Վրաստանում տվել է հարցվողների 45, իսկ Հայաստանում` 37, 45 տոկոսը: Գործատուի հետ ուղղակիորեն կապ են հաստատել Վրաստանում 18, Հայաստանում 26 տոկոս հարցվողները: Սեփական բիզնեսն են սկսել Վրաստանում 10, Հայաստանում 11 տոկոսը: Վրաստանում հարցման ենթարկված աշխատող մարդկանց 9 տոկոսը պատասխանել է, որ գործատուն է գտել իրեն, իսկ Հայաստանում նման պատասխան է տվել 11 տոկոսը: Համացանցի միջոցով է աշխատանք գտել Վրաստանում 4, Հայաստանում 3 տոկոսը:

Եվ աշխատողներին, եւ գործազուրկներին հարց է ուղղվել` արդյոք իրենք կարծում են, որ տիրապետում են տարբեր գիտելիքների եւ որակավորման, որոնք կարող էին օգնել նրանց աշխատանք փնտրելիս: Մասնավորապես, Վրաստանում հարցվողների 81, իսկ Հայաստանում 92 տոկոսը նշել են, որ ունեն հարցազրույցներին լավ ներկայանալու կարողություն: Վրաստանում հարցվողների 72, իսկ Հայաստանում 84 տոկոսն էլ ասել են, որ կարողանում են ճիշտ ռեզյումե պատրաստել: Աշխատանքային հայտարարություններ գտնելու կարողությունը ունի հարցման ենթարկված վրաստանաբնակի 76, իսկ հայաստանաբնակների 79 տոկոսը:

Հարցվողների 70 տոկոսը Վրաստանում,, իսկ 74 տոկոսը Հայաստանում նշել են, որ ունեն համապատասխան կրթություն եւ որակավորում, անհրաժեշտ աշխատանքային փորձ` 58-ը Վրաստանում, 60-ը Հայաստանում:

Համաշխարհային բանկի STEP հմտությունների չափման ծրագիրը հավաքել է տեղեկատվություն մարդկանց կարողությունների արտադրման եւ բաշխման, ինչպես նաեւ այս կարողությունների պահաջարկի վերաբերյալ ցածր եկամուտներով երկրների աշխատանքային շուկաներում` հարցման ենթարկելով 15-64 տարեկան մարդկանց: Ծրագիրն իրականացվել է 2012-2014թթ. Վրաստանում, Հայաստանում, Բոլիվիայում, Կոլումբիայում, Գանայում, Շրի Լանկայում, Վիետնամում: Վրաստանում եւ Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը` ՀՌԿԿ-ն, ուսումնասիրությունն անցկացրել է 2013-ին:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ

# ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի եւ ներքին գործերի նախարարության պարեկային ոստիկանության դեպարտամենտի Քվեմո Քարթլիի գլխավոր վարչության աշխատակիցների համատեղ անցկացված օպերատիվ հետաքննչական միջոցառման արդյունքում, մաքսային ընթացակարգի անցման ժամանակ սահմանային ոստիկանության երրորդ վարչության (Կարմիր կամուրջ) վեցերորդ սահմանային գոտում (Սադախլո) առանձնակի մեծ քանակությամբ թմրանյութերի ապօրինի ձեռքբերման եւ պահման, ապօրինի Վրաստան ներկրելու, զինամթերքի ապօրինի ձեռքբերման եւ պահման մեղադրանքով ձերբակալվել է Հայաստանի քաղաքացի, 1988 թվականի ծնված Ռազմիկ Ս.-ն:

Հետաքննությամբ պարզվեց, որ մեղադրյալը Հայաստանից իր սեփական մեքենայով ապօրինի Վրաստան է ներբերել 1,2 կիլոգրամ թմրանյութ եւ ինքնաձիգի 30 մարտական փամփուշտ: Իրավապահները ձերբակալվածի խուզարկության արդյունքում հայտնաբերել են պոլիէթիլենի պարկում թմրանյութեր, իսկ մեքենայում` 30 մարտական փամփուշտ: Քիմիական փորձաստուգման եզրակացության համաձայն, բռնագանձված թմրանյութը պարունակում է 271,08 գրամ կանեփի հումք:

Հետաքննությունը տարվում է առանձնակի մեծ քանակությամբ թմրանյութի ապօրինի ձեռքբերման, պահպանման, ապօրինի Վրաստան ներբերման, զինամթերքի ապօրինի ձեռքբերման եւ պահպանման փաստով, Վրաստանի քրեական օրենսգրքի 260 հոդվածի երրորդ մասի «ա» ենթակետով, 262 հոդվածի 4-րդ մասի «ա» ենթակետով:

*ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

# ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 26-ին Ախալքալաքիի շրջանի Օրջա գյուղ տանող մայրուղու վրա սպանվել էր ծնունդով խանդոցի, ներկայումս Ռուսաստանի բնակիչ Սարգիս Հակոբյանը: Ինչպես տեղեկացրին Սամցխե-Ջավախեթիի ոստիկանության վարչությունում, սպանությունը բացահայտվել է: Օպերատիվ հետաքննչական միջոցառումների արդյունքում հանցագործությունը թաքցնելու մեղադրանքով ձերբակալվել է 1985 թվականի ծնունդ Արտուր Ի.-ն, 1982 թվականի ծնունդ Արմեն Կ.-ն, ինչպես նաեւ 1989 թվականի ծնունդ, նախկինում դատված Արմեն Ն.-ն, հանցագործությունը թաքցնելու եւ ոստիկանի վրա հարձակվելու մեղադրանքով: Հետաքննությամբ պարզվել է, որ վերոնշյալ անձինք հուլիսի 26-ին օգնել են Օրջա գյուղի մոտ սպանության մեղադրյալին: Մասնավորապես, նրանք Նինոծմինդայի մաքսային անցակետի մոտ դիմավորել են Հայաստանից ժամանած մարդկանց, նրանց փոխանցել սպանության գործիքը` Կալաշնիկով ինքնաձիգը եւ ավտոմեքենան, որով նրանք կարողացել են տեղաշարժվել Վրաստանի տարածքում: Նրանք էլ հաղորդել են, թե որտեղ կարող են հանդիպել զոհվածին: Արմեն Ն.-ն ձերբակալմանը ցուցաբերել է դիմադրություն: Իրավապահ մարմինները Ծալկայի շրջանում այրված հայտնաբերել են հանցագործների մեքենան: Որպես ապացույց առգրավվել է նաեւ սպանության գործիքը` ինքնաձիգը:

Արտուր Ի.-ն խոստովանել է կատարած հանցագործությունը: Ներկայումս միջոցառումներ են իրականացվում մյուս կասկածյալների ձերբակալման ուղղությամբ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵ՞Ր ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում ավտոմեքենաների պարտադիր տեխնիկական ստուգումը գործարկվելու է 2018 թվականի հունվարի 1-ից, իսկ մինչ այդ մասնագետներն իշխանությանը խորհուրդ են տալիս քայլեր ձեռնարկել մեքենաների ներկրման գործում Եվրո-4 չափորոշիչի ներդրման ուղղությամբ, ինչը ինքնին կհանգեցնի նրան, որ մինչեւ 2005 թվականը թողարկված մեքենաների ներկրումը Վրաստան կսահմանափակվի: Նշենք, որ եթե Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը պարտադրում է մեքենաների տեխստուգման գործընթացի ներդրում, ապա եվրոչափորոշիչների կիրարկման մասին պայմանագրում ոչ մի խոսք չի ասվում:*



Ինչպես նշեց ցամաքային տրանսպորտի գործակալության ղեկավար Միխեիլ Խմալաձեն, ավտոմեքենաների տեխստուգման ներդրումը պարտադիր է: «Տեխստուգման հարցում առավել եւս մենք պարտավորություն ենք ստանձնել: Ըստ պայմանավորվածության, երկրում երթեւեկող մեքենաները պետք է լինեն տեխնիկապես համապատասխան մակարդակի: Իսկ ինչ վերաբերում է եվրոչափորոշիչների ներդրմանը, ապա այդ մասին պայմանագրում ոչինչ չի ասված, թեպետ դրա ներդրումը եւս ժամանակի ընթացքում հրատապ կդառնա, քանզի դա միակ ելքն է, ինչը կարող է մեր ներքին ավտոմեքենաների շուկան ապահովագրել փոքրիշատե ամորտիզացված մեքենաների ներկրումից»,- ասաց Միխեիլ Խմալաձեն:

Մեզ հետ զրուցելիս` նման կարծիք հայտնեց նաեւ «Էկոտրանսպորտի կենտրոնի» գործադիր տնօրեն Վասո Ուրուշաձեն: Եթե 2017 թվականի համար հնարավոր կլինի կիրարկել մեքենաների տեխստուգման գործընթացը, ապա այն ժամանակ էլ հնարավոր կլինի խոսել եվրոչափորոշիչների, առավել եւս Եվրո-4-ի ներդրման վերաբերյալ: Միայն նման պայմաններում հնարավոր կլինի իրականացնել ոլորտի բարեփոխումը: Այն պետք է իրականացվի կարճ ժամանակամիջոցում եւ բնակչության համար նվազ ազդեցության պայմաններում»,- նշեց Վասո Ուրուշաձեն:

Վերոնշյալի հետ որոշակի տարակարծիքություն ունի տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայի ղեկավար Դավիթ Մեսխիշվիլին: Նրա խոսքերով, մինչեւ տեխստուգման պարտադիր կիրարկումը պետք է հանձինս Եվրո-4 չափորոշիչի սահմանափակումներ ներդրվեն մեքենաների ներկրման հարցում: «Բոլոր երկրներում հանգեցին այն եզրակացության, որ տրանսպորտի ոլորտում հարկ է նոր չափորոշիչներ սահմանել: Օրինակ, հարեւան Ադրբեջանում, որը, իմիջիայլոց, առեւտրական եւ ոչ մի կազմակերպության անդամ չէ, արդեն ընդունվել է Եվրո-4 չափորոշիչը: Իսկ ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա այնտեղ այս տարվանից` Եվրո-5 չափորոշիչը: Ըստ իս, դա շատ ճիշտ որոշում է: Դրանով նրանք իրենց շուկան ապահովում են ամորտիզացված մեքենաների ներկրումից»,- հայտարարեց Դավիթ Մեսխիշվիլին եւ հավելեց «Մեր դեպքում առկա է տեխստուգման պարտադիր կիրարկման պահանջը, սակայն դրանում ոչինչ չի ասվում չափորոշիչների ներդրման վերաբերյալ, թեպետ պարտադիր տեխստուգման ներդրմանը պետք է նախորդի մեքենաների ներկրման վրա Եվրո-4-ի կիրարկումը: Դրանով ապահովվում է ներքին շուկան, թեպետ դա չի նշանակում, որ ճնշում է գործադրվում ներկայումս երթեւեկող մեքենաների սեփականատերերի վրա: Սահմանափակումն առնչվելու է միայն ներկրվող մեքենաների վրա»,- հայտարարեց Մեսխիշվիլին:

Թե տրանսպորտի հարցերի կարգավորման հարցում, ինչ որոշում կընդունի կառավարությունը, դեռեւս հայտնի չէ, թեպետ այսօր արդեն կարելի է նշել, որ նախորդ իշխանության կողմից վերացված տեխստուգման վերականգնման մասին խոսակցությունները շարունակվում են մեկ տարուց ավելի: Մի քանի անգամ նշվեց դրա ներդրման ժամկետը, թեպետ վերջին պահին կրկին հետաձգվեց: Գործադիր իշխանությունն այն հետաձգումը հիմնավորում է տեխնիկական համապատասխան բազայի բացակայությամբ: Վերջնականապես որոշվել էր մեքենաների պարտադիր տեխստուգումը ներդնել 2017 թվականի հունվարի 1-ից: Ինչ վերաբերում է եվրոչափորոշիչներին, ապա տեղեկացնենք, որ Եվրո-5 չափորոշիչը գործում է 2009 թվականից: Ընդհանուր առմամբ, տրանսպորտի կարգավորման թեման Եվրոպայում հրատապություն ձեռք բերեց 1990 թվականից, երբ սահմանվեց մեքենաների կողմից մթնոլորտ առաքվող արտահոսքերի չափորոշիչը: Ներկայացվող պահանջը տարեցտարի խստացվում էր: Օրինակ, եթե Եվրո-1 չափորոշիչը սահմանափակումներ է դնում մինչեւ 1993 թվականը մեքենաների վրա, ապա Եվրո-2-ն առնչվեց մինչեւ 1996 թվականը թողարկած մեքենաների վրա: Եվրո-3 չափորոշիչը արգելքներ սահմանեց մինչեւ 2000 թվականը թողարկած մեքենաների վրա, Եվրո-4-ը այդ պահանջը առաջադրեց արդեն մինչեւ 2005 թվականը թողարկածների վրա, իսկ Եվրո-5-ը վերաբերում է մինչեւ 2010 թվականը թողարկած մեքենաներին:

Վերջում մի քանի խոսք` վիճակագրության վերաբերյալ: Վիճակագրական տվյալներով, Վրաստանում վերջին երկու տարվա ընթացքում մեքենաների թիվը կտրուկ ավելացել է եւ անցյալ տարվա տվյալներով, այն հասել է գրեթե 1 միլիոնի, ավելի ստույգ` 960 հազարի: Վիճակագրության համաձայն, Վրաստանի յուրաքանչյուր չորրորդ քաղաքացին ունի ավտոմեքենա, այսինքն` յուրաքանչյուր ընտանիք ունի առնվազն մեկ մեքենա: Հատկանշական է, որ Վրաստանում երթեւեկող ավտոմեքենաների 40 տոկոսը կենտրոնացված է Թբիլիսիում: Ինչպես տեղեկացրին տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայում, վերջին յոթ տարիների ընթացքում Վրաստան են ներկրվել գրեթե կես միլիոն ավտոմեքենա, հիմնականում հնացած մոդելների: Ընդհանուր առմամբ, Վրաստանում գրանցված ավտոմեքենաներից 380 հազարը 20 եւ ավելի տարիներ առաջ թողարկված տրանսպորտային միջոց են: Վերջին երեք տարիների ընթացքում թողարկած մեքենաների թիվը 50 հազարից չի անցնում:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*